ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- սեպտեմբերի 2024 թվականի №-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի №769Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը, 30-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «ՖԻՐՄԱ Գ.Ա.Խ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2024 թվականի սեպտեմբերի 3-ի գրությունը, Հանձնաժողովը **որոշում է.**

1. Տասնհինգ տարով երկարաձգել Հանձնաժողովի 2009 թվականի դեկտեմբերի 2-ի «ՖԻՐՄԱ Գ.Ա.Խ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Հեր-Հեր-1» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №769Ա որոշմամբ «ՖԻՐՄԱ Գ.Ա.Խ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված «Հեր-Հեր-1» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0338 լիցենզիայի գործողության ժամկետը, որոշման՝

1) 1-ին կետում «15 տարի» և 2-րդ կետով հաստատված հավելվածի 3-րդ կետում «մինչև 2024 թվականի դեկտեմբերի 2-ը» բառերը փոխարինելով «մինչև 2039 թվականի դեկտեմբերի 2-ը» բառերով.

2) 1-ին կետում «Զայքենդ» տարածքում» բառերը փոխարինել «Վայք համայնքի վարչական տարածքում (գյուղ Արին)» բառերով, իսկ 2-րդ կետով հաստատված

հավելվածի 5-րդ կետում «Չայքենդ» տարածքում» բառերը փոխարինել «Վայք համայնքի վարչական տարածքում (գյուղ Արին)» բառերով:

2. «ՖԻՐՄԱ Գ.Ա.Խ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ՝

1) «Հեր-Հեր-1» փոքր հիդրոէլեկտրակայանում արտադրվող ամբողջ էլեկտրաէներգիայի գնման երաշխիքի՝ «Էներգետիկայի մասին» օրենքով սահմանված 15 տարվա ժամկետն ավարտվում է 2024 թվականի դեկտեմբերի 2-ին.

2) պարտավոր է «Էներգետիկայի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի «ա1» և «ա2» կետերի համաձայն՝ արտադրության լիցենզիա ստանալու համար Հանձնաժողով ներկայացված փաստաթղթերի (այդ թվում՝ դրանցով ամրագրված իրավունքների) փոփոխության դեպքում նախապես, իսկ այդ մասին իրեն հայտնի չլինելու դեպքում տեղեկանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում, ինչպես նաև արտադրության լիցենզիա ստանալու, այդ թվում՝ արտադրության (վերակառուցման) ժամանակահատված ամրագրելու համար անհրաժեշտ իրավունքն օրենսդրությամբ սահմանված կարգով դադարելու դեպքում (այդ թվում՝ իրավունքը հավաստող փաստաթղթի գործողության ժամկետը չերկարաձգվելու դեպքում) այդ մասին տեղեկանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում տեղեկացնել Հանձնաժողովին՝ ներկայացնելով փոփոխության հիմնավորումները և փոփոխված փաստաթղթերը:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի դեկտեմբերի 2-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- սեպտեմբերի 2024թ.